ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԱԽԱԱՎԱՐԱՅՐՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ՀՏԴ 323.2
DOI: 10.56246/18294480-2025.18-10

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող,
պատմական գիտությունների թեկնածու
էլփոստ՝ argishtivardanyan3@gmail.com

Սասանյան Պարսկաստանը, որը V դ. կեսին ձեռնամուխ եղավ տարածաշրջանում քրիստոնեության վերացմանն ու զրադաշտականության հաստատմանը, հանդիպեց Այսրկովկասյան ժողովուրդների, մասնավորապես հայ ժողովրդի դիմադրությանը: 450թ. հոկտեմբերին մարզպանական Հայաստանի սահմանագլխին՝ Խաղխաղում, հայկական բանակը սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ ջախջախեց պարսից զորաբանակին և ազատագրեց Աղվանքը: Սակայն 450թ. աշնանը մարզպան Վասակ Սյունին որդեգրեց նոր քաղաքական կողմնորոշում՝ փորձելով կասեցնել ազատագրական շարժումը, որը երկու հակամարտող կողմերին բերեց քաղաքական պատերազմի: 450-451թթ. ձմռանը նախարարները փորձում են վերականգնել ոչ վաղ անցյալում կործանված հայոց թագավորությունը՝ գահ բարձրացնելով Վահան Արծրունուն, սակայն կարճ ժամանակ անց հրաժարվելով նրա թեկնածությունից՝ Վարդան Մամիկոնյանին օժտեցին թագավորական իրավունքներով՝ հանձնելով նրան Արշակունիների ոստանը: Հետագա ամիսներին մարզպանի ջանքերի շնորհիվ, որն ամեն ջանք գործադրում էր պարսկական զենքի հաղթանակը դյուրացնելու համար, ապստամբական շարժումը հայտնվեց դիվանագիտական մեկուսացման մեջ: 451թ. մայիսի 26-ին Ավարայրի դաշտում հայկական բանակը ճակատամարտ տվեց կրկնակի գերազանցող պարսից զորաբանակի դեմ: Ճակատամարտում զոհվեց Վարդան Մամիկոնյանը և հայկական բանակը, նահանջելով երկրի դժվարամատչելի վայրերը, շարունակեց պայքարը մինչև տարեվերջ: Ի վերջո, պարսից արքունիքն էլ հայերի համառ պայքարի և դիմադրության շնորհիվ հրաժարվեց իր մտադրություններից:

Բանալի բառեր՝ *Վարդան Մամիկոնյան, Վասակ Սյունի, Եղիշե, Ղազար Փարպեցի, Վահան Արծրունի, Ավարայրի ճակատամարտ:*

Ներածություն

428թ.՝ հայ Արշակունիների թագավորության անկումից հետո, թեպետ Հայաստանը վարչական առումով գտնվում էր Պարսկաստանի վերահսկողության տակ և երկրից գանձվող հարկերն արդեն հանձնվում էին պարսից դուռը, սակայն ներքին կյանքում կար ինքնուրույնություն, հայոց այրուձին պատերազմի ընթացքում առաջնորդում էին հայ նախարարները[1], այսինքն՝ պետականության կրողը երկրում մնում էր նախարարական համակարգը: Սակայն այս վիճակը երկար չշարունակվեց և Հազկերտ Բ-ն (438-457) ձեռնամուխ եղավ քրիստոնեության վերացմանն ու զրադաշտականության հաստատմանը տարածաշրջանում:

Իրադրությունը 450թ. աշնանը: Հայոց թագավորության վերականգնման փորձը

Ելնելով տարածաշրջանում տիրող ռազմաքաղաքական իրավիճակից՝ որոշում է կայացվում ոչ միայն օգնել Աղվանքին, որը կարճ ժամանակամիջոցում ռազմակալվեց պարսից զորագլուխ Սեբուխտի բանակի կողմից, այլև կասեցնել հյուսիս-արևելքից պարսկական բանակի մուտքը Հայաստան, քանի որ պարսից ռազմական վերնախավի նպատակն էր՝ առաջանալով հարավ, միանալ Փայտակարանի ռազմակայարանում կուտակվելիք զորագնդերին, որն արդեն պատկառելի թիվ էր կազմելու, ներխուժել Այրարատ և առանց ներգրավելու հավելյալ ուժեր՝ ճնշել ապստամբական շարժումը:

Գլխավոր ճակատամարտը պարսից գերակշիռ ուժերի դեմ տեղի ունեցավ 450թ. հոկտեմբերին մարզպանական Հայաստանի սահմանագլխին՝ Ուտիք նահանգի Խաղխաղ քաղաքի մերձակայքում, որտեղ հայկական երկրորդ բանակը սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ ծանր պարտության մատնեց պարսից գերակշիռ ուժերին[2], որը հետ Արշակունյաց շրջանի հայկական ռազմուժի փայլուն հաջողություններից էր: Կարճ ժամանակամիջոցում ազատագրելով Աղվանքը՝ հայ-աղվանական բանակը հասավ վերջինս Հոնաց աշխարհի հետ բաժանող Ճորա պահակ լեռնանցքը[3], որտեղ գտնվում էր պարսից բերդապահ զորակայանը: Գրավելով այն և դաշինք կնքելով խայլանդուր հոների[4] հետ, որոնք հայերին դիտարկում էին որպես ապագա դաշնակիցներ

---

[1] Տե՛ս **Եղիշէ,** 1989, 12:

[2] Հայ-աղվանական զինակցության և Խաղխաղի ճակատամարտի վերաբերյալ վերջին քննությունը տե՛ս **Վարդանյան**. 2023, 35-52:

[3] Ճորա պահակը նույն Դերբենդի լեռնանցքն է տե՛ս **Кудрявцев, Кудрявцев**, 2015, 19-20:

[4] Ըստ Ռ. Մանասերյանի՝ Վարդան Մամիկոնյանը դաշինք կնքեց ոչ թե Աթիլլայի ենթակայության տակ գտնվող հոների հետ, այլ խայլանդուր հոների / տե՛ս **Манасерян**. 2011, 73/.

Պարսկաստանի դեմ պայքարում, երեսուն օր տևող արշավից հետո, երբ «ժամանակ ձմերայնւոյ հասեալ էր»[1], հայկական բանակը վերադարձավ հայրենիք:

Մինչ սպարապետն Աղվանքում էր, իսկ Ներշապուհ Արծրունու գլխավորած հայկական առաջին բանակը գտնվում էր Հայաստանի հարավային սահմաններում՝ պաշտպանելով երկիրը պարսիկների անակնկալ հարձակումից, գործողությունների ազատություն ստացած մարզպանը, պահը հարմար համարելով, բացեիբաց հրաժարվեց իր նախորդ դիրքորոշումից, որդեգրեց միանգամայն նոր քաղաքական ուղեգիծ և սկսեց հաշվեհարդար տեսնել իր քաղաքական հակառակորդների հետ: Երկրում ամբողջ իշխանությունն իր ձեռքը գցելու համար նա տիրացավ Հայաստանի նշանավոր բերդերին ու ամրոցներին, ամայացրեց միջնաշխարհի ձմեռոցներն ու զորակայանները, նույնիսկ մայրաքաղաք Արտաշատը՝ կալանավորելով նաև հակառակորդ նախարարների ժառանգներին[2]: Սրանով ապստամբական շարժմանը հասցվեց ծանր հարված, երկփեղկվեց ազատագրական պայքարի միասնությունը, և երկրում սկսվեց քաղաքացիական պատերազմ: Եթե հետևելու լինենք դեպքերի հաջորդականությանը, ապա ուշագրավ է այն հանգամանքը, որ Վասակ Սյունին վաղուց էր մտադրվել կասեցնել ապստամբության հետագա ընթացքը և հարմար պահի էր սպասում՝ իր քաղաքական նպատակներն իրականացնելու համար: Աչքի էր զարնում այն հանգամանքը, որ մարզպանն ամեն ինչ անում էր՝ զանազան առաջադրանքներով Վարդանի կողմնակիցներին երկրից դուրս հանելու և իր գործողությունները դյուրացնելու համար: Բյուզանդիա մեկնող պատվիրակության կազմում չկար Վասակի գեթ մեկ կողմնակից: Հմայակ Մամիկոնյանը սպարապետի եղբայրն էր, Մերուժան Արծրունին՝ Հմայակի քենակալը, Վահան Ամատունին՝ մարզպանի երդվյալ թշնամին[3], որը նաև վերջինիս ջանքերի շնորհիվ էր զրկվել հազարապետի պաշտոնից: Ասվածի վկայությունն է այն, որ երբ սկսվեց աղվանից արշավանքը, հայկական երկրորդ բանակի ամբողջ հրամանատարական կազմը նույնպես Վարդանի կողմնակից էր: Վերը նշված փաստերը վկայում են այն մասին, որ Վասակ Սյունին վաղուց էր մտադրվել պետական հեղաշրջում կատարել և առիթի դեպքում Մամիկոնյանների համախոհներին հեռացնում էր երկրից՝ տեղում պահելով իր գաղափարակիցներին[4] և նրանց զորամիավորումները

---

[1] **Եղիշէ**, 1989, 160:

[2] Տե՛ս **Եղիշէ,** 1989, 158, **Ղազարայ Փարպեցւոյ,** 1982, 156:

[3] Տե՛ս **Ղազարայ Փարպեցւոյ,** 1982, 138:

[4] Տե՛ս **Եղիշէ,** 1989, էջ 186, **Ղազարայ Փարպեցւոյ**, 1982, 156:

Իմանալով Վարդան Մամիկոնյանի, ինչպես նաև Ներշապուհ Արծրունու գլխավորությամբ հայկական բանակների՝ միջնաշխարհին մոտենալը՝ սեփական հայրենիքի մի մասն ավերած, եկեղեցիները թալանած, հայոց շարքերը պառակտած[1] Վասակը հապճեպ հեռացավ Սյունիք և ապա Փայտակարանի պարսկական ռազմաճամբար: Հայաստանի կենտրոնական շրջանները գրաված ուխտապահները Վասակին Սյունիքում կղզիացնելու համար զորք ուղարկեցին այնտեղ. «առնոյր և աւերէր զբազում գաւառս. և այնպէս ի նեղ արկանէր զնա և զամենայն զօրան»[2]: Սպարապետի նպատակն էր ճնշել Սյունիք նահանջած երրորդ բանակի՝ Վասակին ենթակա մնացած ռազմական ուժերը, նեղացնել նրանց վերահսկողության գոտին, կանխել փոխգործակցությունը պարսկական բանակի հետ[3]: Վարդան Մամիկոնյանին հաջողվեց 450թ. վերջին վերահսկողություն հաստատել մարզպանական Հայաստանի գրեթե ողջ տարածքի վրա՝ բացառությամբ Սյունիքի մի քանի բերդերի[4]: Սյունիքը վերջնականորեն գրավելուն խանգարեցին դժվարամատչելի տեղանքը և վերահաս ձմեռը:

---

[1] Ըստ Եղիշեի՝ Ավարայրի ճակատամարտից ամիսներ առաջ Վասակ Սյունուն գաղտնի և բացահայտ հարել էր նախարարների մի խումբ, թվով ինը նախարար և մեկ սեպուհ՝ Արտակ Ռշտունին, Գադիշո Խոռխոռունին, Գյուտ Վահևունին, Տիրոց Բագրատունին, Մանեճ Ապահունին, Արտեն Գաբեղյանը, Ընջուղ Ակեացին, Ներսեհ Ուրծան, Վարազշապուհ Պալունին, Մանեն Ամատունին / տե՛ս **Եղիշէ**, 1989, 186/: Սակայն Ղազար Փարպեցին Վասակի կողմնակիցների ավելի համեստ թիվ է ներկայացնում, այդ շարքում չի հիշատակում Արտակ Ռշտունուն և Ընջուղ Ակեացուն /տե՛ս **Ղազար Փարպեցի,** 1982, 156/, որոնք հավանաբար քաղաքացիական պատերազմի ժամանակ կա՛մ զոհվել էին, կա՛մ Ավարայրի նախօրյակին լքել Վասակին: Իսկ Գյուտ Վահևունին Արտազում միացավ հայկական բանակին /տե՛ս **Եղիշէ,** 1989, 200/: Նշենք, որ մարզպանի կողմնակից մի շարք նախարարներ իրենց զինուժի սահմանափակ ուժերով էին սատարում Վասակին, քանի որ տոհմի անդամների մի մասը Վարդանի կողմնակից էր: Խորեն Խոռխոռունին, Արտակ Պալունին, Խոսրով Գաբեղյանը, Ակեացիների և Ռշտունիների զորքը /տե՛ս **Եղիշէ,** 1989, 200, 202/ Ավարայրի դաշտում մարտնչում էին հայկական բանակի կազմում: Կարելի է եզրակացնել, որ Վասակ Սյունուն չհաջողվեց իր հետևից տանել նախարարների մեծ մասին և չուներ մի ամբողջ նախարարական կուսակցություն, ինչպես նշում են Լեոն /տե՛ս **Լեո,** 1967, 74/ և նրան հետևող հեղինակները, այլ իրենց ամբողջ զինուժով մարզպանին սատարում էին ընդհանուր առմամբ երեք նախարարներ՝ Տիրոց Բագրատունին, Մանեճ Ապահունին և Ներսեհ Ուրծա իշխանը: Ավելին՝ Սյունյաց նախարարական տունն ամբողջությամբ չէր հարում Վասակին. Բաբկեն և Բակուր իշխանները ոչ միայն մասնակցեցին Ավարայրի ճակատամարտին, այլև մյուս նախարարների հետ կիսեցին պարսկական աքսորը /տե՛ս **Եղիշէ,** 1989, 232, 237, 1989, 388, **Ղազարայ Փարպեցւոյ,** 1982, 204/: Տասնամյակներ անց Բաբկեն Սյունին դարձավ Վահան Մամիկոնյանի եռանդուն աջակիցը:

[2] **Եղիշէ,** 1989, 162:

[3] Տե՛ս **Айвазян**, 2016, 169.

[4] Տե՛ս **Айвазян,** 2016, 186.

450-451թթ. ձմռանը սպարապետը և համախոհ նախարարներն Արտաշատում ձևավորեցին իշխանության նոր մարմիներ[1] և փորձեցին մարզպանական Հայաստանի տարածքի վրա վերականգնել երկրի անկախությունը: Ըստ Թովմա Արծրունու՝ նախարարները Վարդան Մամիկոնյանին հանձնեցին «զվերակացութիւն Հայոց. և եղեն հնազանդեալ նմա զամենայն աւուրս Վարդանայ»[2], կամ ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ «Եւ յայմհետէ ապա հնազանդէին Հայք առաջնորդութեան քաջին Վարդանայ մինչև ցօր մահուան նորա»[3]: Սակայն մինչ այդ Արծրունյաց պատմիչը վկայում է, որ Արշակունյաց թագավորության կործանումից երկու տասնամյակ անց՝ Ավարայրի նախօրյակին, երկրի գլխավոր քաղաքական և ռազմական ուժերը՝ նախարարները, որոնց ջանքերի շնորհիվ էր նաև երկու տասնամյակ առաջ կործանվել Արշակունյաց թագավորությունը, փորձում են վերականգնել թագավորական իշխանությունը, գահ բարձրացնել Վահան Արծրունուն. «Իսկ զթագաւորաբնակ տեղին մեծին Տրդատայ տան ի ձեռս Վահանայ Արծրունւոյ՝ շինել նմա տուն թագաւորաց, արարս պատրաստութեամբ. քանզի խորհեցան թագաւորեցուցանել զնա ի վերայ Հայոց»[4]: Արծրունիների թեկնածությունը հայոց գահի համար պայմանավորված էր այն հանգամանքով, որ Վասակ Սյունու հեռանալուց հետո Արծրունյաց իշխանը, ըստ «Գահնամակի» աստիճանակարգի, դարձել էր առաջին նախարարը: Ավատատիրության պայմաններում ավագության իրավունքն այնպիսի անխոցելի հանգամանք էր, նշում է Բ. Հարությունյանը, որ նույնիսկ Վարդան Մամիկոնյանը

---

[1] Ս. Երեմյանը և Մ. Կատվալյանը, առանց որևէ աղբյուրի հղում կատարելու, նշում են, որ վերականգնվում է Արշակունյաց ժամանակաշրջանի գործակալությունները: Վահան Ամատունին վերահաստատվեց հազարապետ, Խորեն Խոռխոռունին՝ մաղխազ, կաթողիկոս Հովսեփ Հողոմցին՝ Մեծ դատավոր, իսկ մարդպետի պաշտոնը հանձնվում է Միհրշապուհին /տե՛ս **Երեմյան**, 1984, 183, **Կատվալյան,** 2003, 20/: Սակայն Հ. Դավթյանը հակադարձելով նշում է, որ պատմիչների աշխատանքներում արձանագրված չէ վերը նշված փաստը, թե՛ Եղիշեն, թե՛ Ղազար Փարպեցին նույնիսկ ակնարկով չեն վկայում այդ մասին /տե՛ս **Դավթյան**, 2015, 624/: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ղազար Փարպեցին, անդրադառնալով Ավարայրի դաշտում հայկական զորաբանակի դասավորությանը, նշում է նաև զորագլուխների զբաղեցրած պաշտոնը. «միջոցի գնդի կարգէր գլխաւոր զտէրն Արծրունեաց, և մարդպետ Միհրշապուհ… և կողմնն աջոյ կարգէր աւագ՝ զերանելին Մախազ Խորէն» /տե՛ս **Ղազարայ Փարպեցվոյ,** 1982, 168/: Պատմիչի հստակ հաղորդումից կարելի է փաստել, որ եթե վերականգնվել էր մարդպետի և մաղխազի գործակալությունները, ապա պետք է լիներ նաև հազարապետ ու Մեծ դատավոր, և Ավարայրից ամիսներ առաջ վերականգնվել էր պետության կառավարման համար անհրաժեշտ գործակալությունները, նույնիսկ մարդպետի տիտղոսը /տե՛ս **Ժամկոչյան**, 2003, 29-30/:

[2] **Թովմա Արծրունի** և **Անանուն,** 1985, 128:

[3] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ**, 1996, 62:

[4] **Թովմա Արծրունի** և **Անանուն,** 1985, 126:

չընդդիմացավ նախարարների կամքին, և նաև ինքն առաջ մղեց Վահան Արծրունու թեկնածությունը հայոց գահի համար որպես Վասակ Սյունու հակակշիռ[1]: Վ. Վարդանյանն ընդհանրապես չի հավատում Թովմա Արծրունու հաղորդմանը՝ նշելով, որ Վահանի մասին շարադրված անվավեր պատում է[2]: Բ. Հարությունյանը ենթադրում է, որ Արծրունյաց իշխանը թագադրվել էր, որովհետև չթագադրված մարդուն Արշակունյաց թագավորական տեղերը չէին հանձնի և պալատ կառուցելու իրավունք չէին տա[3]: Սակայն չենք կարող համաձայնել հեղինակի տեսակետին, քանի որ պատերազմի մոտալուտ վտանգը, Փայտակարանի զորակայանի գոյությունը, Վասակի քայքայիչ գործունեությունը, միջնաշխարհի բերդերի և զինապահեստների ավերված լինելը նման հնարավորություն չէին ընձեռի, և հայկական կողմի առաջնահերթությունը մնում էր պատերազմի պատրաստությունը, ոչ թե թագադրությունը, որը, հավանաբար, թողնվելու էր խաղաղ ժամանակների: Սակայն կարճ ժամանակ անց նախարարները անմիաբան գտնվեցին, հրաժարվելով Վահանի թեկնածությունից[4]՝ հայոց վերակակացությունը հանձնելով Վարդան Մամիկոնյանին[5]: Նշված հաղորդման իսկությունը հաստատվում է Մեսրոպ Վայոցձորեցու տեղեղեկությամբ. «Վարդան Մամիկոնեան բռնացեալ ունէր զտեղի թագաւորացն Հայոց»[6]: Նմանաբովանդակ հաղորդում ունի նաև Վարդան պատմիչը՝ նշելով. «Իսկ նախարարացն ի մի վայր ժողովեալ, կացուցանեն տեղապահ թագաւորութեան զսուրբն Վարդան»[7] և քիչ անց ավելացնում. «հնազանդեցան սրբոյն Վարդանայ ամենայն նախարարքն Հայոց [8] »: Պատմիչների հաղորդումները ցույց են տալիս, որ Ավարայրի նախօրյակին Վարդան Մամիկոնյանը օժտված է եղել թագավորական իրավունքներով և որպես սեփական կալվածքի՝ տիրում էր Արշակունիների տիրույթներին[9]: Եվ բնական է, եթե Վասակ Սյունին պարսից գերակայությամբ ձգտում էր տիրանալ հայոց գահին, ապա մարզպանական Հայաստանի ամենամեծ հողատերը, Սահակ Պարթևի թոռն ու ժառանգական սպարապետ Վարդան Մամիկոնյանը ևս պետք է փորձեր ձգտել հայոց գահին: Այս առումով Աշ.

---

[1] Տե՛ս **Հարությունյան,** 2003, 40:

[2] **Վարդանյան**, 2002, 46:

[3] Տե՛ս **Հարությունյան,** 2003, 49:

[4] Ըստ Թովմա Արծրունու՝ Վահան Արծրունին զոհվեց Ավարայրի դաշտում, սպարապետի հետ միասին, տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն,** 1985, 128:

[5] **Թովմա Արծրունի** և **Անանուն,** 1985, 126, 128:

[6] **Մեսրոպայ Երեցու Վայոցձորեցու,** 2010, 740: Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. N 5980, 121 ա-բ :

[7] **Հավաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի**, 1862, 61:

[8] **Հավաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի**, 1862, 62:

[9] Տե՛ս **Налбандян,** 1972, 160.

Հովհաննիսյանը փաստում է, որ Վարդանանց պատերազմի ժամանակ Մամիկոնյան և Սյունյաց նախարարական տների բախումը տեղի է ունեցել Արշակունյաց նախկին թագավորության ժառանգության շուրջ[1], այն արտացոլ-ված է եղել Եղիշեի ու Ղազար Փարպեցու երկերում, սակայն երբ եկեղեցուն հարկավոր դարձավ գովերգել ոչ թե հայոց անկախ թագավորության գահակալ Վարդան Մամիկոնյանին, այլ նահատակության համար Ավարայր մեկնած սպարապետին[2], հետագայում այն դուրս է հանվել արտագրողների և գրիչների կողմից[3] ՝ նպատակ ունենալով հայոց պետականության վերականգնմանն ուղղված ջանքերը ներկայացնել որպես կրոնի և եկեղեցու համար պայքար:

Իրադրությունը 451թ. գարնանը

450-451թթ. ձմռանը և գարնանը հակառակորդ կողմերը, տենդագին նախապատրաստվելով պատերազմական գործողություններին, փորձում էին դաշնակիցներ ձեռք բերել: Արդարության համար նշենք, որ Վարդան Մամիկոնյանը և իր կողմնակիցները, ինչպես նաև հոգևոր դասը դիվա-նագիտական ճակատում բացարձակ պարտություն կրեցին: Նախ, Բյուզանդիան հրաժարվեց որևէ օգնություն տրամադրելուց մարզպանական Հայաստանին, որը պայմանավորված էր կայսրության ռազմաքաղաքական թուլությամբ, ինչպես նաև վերջինիս համար շահեկան չէր մարզպանական Հայաստանի անկախացումը Պարսկաստանից, ինչը կարող էր օրինակ հանդիսանալ արևմտյան Հայաստանի համար[4], և այդ ժամանակ դեռևս ինքնակառավարվող հայկական գավառները կձգտեին միավորվել պարսկական ենթակայությունից դուրս եկած հայոց վերականգնված թագավորության հետ[5]: Ապստամբական շարժումը օգնություն չստացավ նաև Աղվանքից և Վիրքից[6]: Նշենք, որ մարզպանին հաջողվեց տարաբնույթ խոստումներով և ստահոդ լուրերով 451թ. գարնանն արգելափակել հոների օգնության ճանապարհը՝ նրանց դեմ հանելով վրաց զորքը և հյուսիսկովկասյան մի շարք ցեղապետություններ: Վասակը կարողացավ նաև «սոյնպէս առնէր և ընդ ամենայն կողմանս ամրականաց աշխարհին, ի Տմորիսն և ի Կորդիսն, յԱրցախ... և յաշխարհն Խաղտեաց. յղէր պնդէր, զի ասպնջականութեան ոք արժանի մի՛ արասցէ»[7], ինչպես նաև իր կողմը գրավել

---

[1] Տե՛ս **Հովհաննիսյան,** 1957, 99:

[2] Տե՛ս **Հարությունյան**, 2016, 95:

[3] Տե՛ս **Նալբանդյան**, 1953, 73:

[4] Տե՛ս **Իսկանյան,** 1991, 97:

[5] Տե՛ս **Айвазян,** 2016, 76:

[6] Վիրքի, մասնավորապես Աղվանքի համընդհանուր ապստամբությունից դուրս մնալու պատճառների վերաբերյալ տե՛ս **Վարդանյան**, 2023, 37, 46-47:

[7] **Եղիշէ,** 1989, 190:

Ստորին Հայքի սպարապետ Վասակ Մամիկոնյանին[1]: Վասակ Սյունու ջանքերի շնորհիվ, որն ամեն գնով փորձում էր դյուրացնել պարսկական զենքի հաղթանակը, ապստամբական շարժումը հայտնվեց մեկուսացման մեջ՝ միմիայն ապավինելով սեփական ուժերին: Նրա օգնության արդյունքում պարսկական զորքերը բարեհաջող կենտրոնացան և ձմեռեցին Փայտակարանում, գարնանը կազմ ու պատրաստ սկսեցին արշավանքը դեպի Ավարայր[2]:

Մանրամասն չանդրադառնալով 451թ. մայիսի 26-ի վաղ առավոտյան սկսված և մինչ երեկո տևած Ավարայրի ճակատամարտի նկարագրությանը, քանի որ XVIII դ. մինչև այսօր այդ բախտորոշ ճակատամարտը և նրա գործող գլխավոր անձանց գործունեության ուսումնասիրությունը գտնվել են հայ պատմագիտական մտքի ականավոր ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում և բազմաթիվ հարցերի տրվել են սպառիչ պատասխաններ, փորձենք որոշ դրվագների վրա ուշադրություն դարձնել: Նախ՝ Եղիշեն հաղորդում է, որ երբ հայկական բանակն Արտազ գավառ հասավ, «լինէր հանդես համարուն վաթսուն և վեց հազար այր ընդ հեծեալ և ընդ հետևակ»[3] : Այսպիսի բանակի թվակազմ Վարդանանց բանակը չէր կարող ունենալ. այն գործնականում անհնար էր մարզպանական Հայաստանի պայմաններում, քանի որ Արշակունիների շրջանում, ըստ «Զօրանամակի»-ի ուսումնասիրության, արքունի ու նախարարական գնդերի առավելագույն թվաքանակը կազմել է մոտավորապես 120 հազար[4]: Սակայն ինչպես Խաղխաղի ճակատամարտի դեպքում[5], այնպես էլ Ավարայրում այդ բանակն ավելի համեստ թիվ պետք է ունենար, քան ներկայացնում է Եղիշեն, քանի որ 387թ. Մեծ Հայքի բաժանման հետևանքով նրանից անջատվեցին բդեշխությունները[6], ապա արևմտահայկական թագավորությունից զատվեցին Անձիտը, Անգեղտունը և Մեծ Ծոփքը, որոնք արքունական կալվածքներ էին[7], իսկ միջնաշխարհը բաժանվեց Հռոմի և Պարսկաստանի միջև: Արևելահայկական թագավորության տարածքը, ըստ Ս. Երեմյանի, բաժանման արդյունքում կազմեց 134361 կմ²[8], սակայն դրան պետք է ավելանային Արցախը և Ուտիքը՝ մոտ 22843

---

[1] Տե՛ս **Եղիշէ,** 1989, Վասակ Մամիկոնյանի գործունեության վերաբերյալ տե՛ս **Վարդանյան,** 2024, 55-57:

[2] Տե՛ս **Հարությունյան,** 2003, 192:

[3] **Եղիշէ**, 1989, 202:

[4] Տե՛ս **Адонц**, 1971, 285-287: **Հարությունյան,** 2012, 29, 40:

[5] Խաղխաղի ճակատամարտում հայկական բանակի թվակազմի վերաբերյալ տե՛ս **Սարգսյան,** 1969, 179: **Хачатрян,** 1992, 131, 133: **Հակոբյան,** 2003, 63: **Հարությունյան,** 2003, 189: **Айвазян,** 2016, 114. **Վարդանյան**. 2023, 40-42:

[6] Տե՛ս **Փաւստոսի Բիւզանդացւոյ,** 1987, 400:

[7] Տե՛ս **Հարությունյան,** 1982, 92-93:

[8] Տե՛ս **Երեմյան,** 1963, 70:

կմ[2] տարածությամբ[1], որոնք սկզբում՝ մինչև 428թ., հայոց թագավորության մաս էին կազմում, իսկ մինչև 461թ.՝ հայկական մարզպանության: Եվ, բնական է, մարզպանական Հայաստանը, որը տարածությամբ կազմում էր Մեծ Հայքի տարածքի մոտավորապես կեսը[2], V դ. կեսին չէր կարող բանակի նման թվակազմ ունենալ: Եվ Վարդան Մամիկոնյանի կողմից 66 հազարանոց բանակ մարտադաշտ դուրս բերելն անիրական էր. այն ավելի համեստ թիվ էր կազմելու, քանի որ պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ոչ բոլոր գավառներն էին իրենց զինուժով միացել ուխտապահների բանակին. մասնավորապես չեզոքություն պահեցին Տմորիքը, Կորդուքը և Արցախը[3], ինչպես նաև Վասակն իր զորաբաժնով և համակիր նախարարներով, որոնց զինուժի թիվը հաշվվում էր մոտ 20 հազար[4], հանդես էին գալիս պարսկական ուժերի կազմում: Խնդրո առարկա հարցի վերաբերյալ ուսումնասիրողները հայտնել են տարբեր տեսակետներ[5]: Ընդունելի է Ս. Սարգսյանի տեսակետը, ըստ որի՝ Վարդանը կարող էր հավաքագրել 35-40 հազար[6] զինվոր, որից առավելագույնը 20 հազարը[7] հեծելազոր, իսկ մյուս կեսը՝ հետևակ, այն էլ՝ համընդհանուր զորահավաքի դեպքում: Քանի որ սկզբնաղբյուրները մարզպանական բանակի միայն հեծելազորի թվաքանակը նշում են 30 հազար[8], որի 1/3 մասը մնացել էր Վասակ

---

[1] Տե՛ս **Երեմյան,** 1963, 41, 117, 118:

[2] Տե՛ս **Վարդանյան,** 2023, 41:

[3] Տե՛ս **Եղիշէ,** 1989, 190:

[4] Տե՛ս **Մուրադյան,** 1989, 77, 80: Ըստ Մ. Օրմանյանի հաշվումների՝ Վասակ Սյունին իր տրամադրության տակ ուներ ավելի քան 40 հազարանոց բանակ, տե՛ս **Օրմանեան.** 2001, 431:

[5] Լեոն առանց մանրամասնելու նշում է, որ 66 հազարը չափազանցված մի թիվ է, տե՛ս **Լեո.** 1967, 79: Հ. Հակոբյանը, համադրելով ճակատամարտին մասնակցող հայկական կողմի նախարարների քանակը և «Ձօրանամակ»-ի հաղորդումները նրանց զինված ուժերի թվի վերաբերյալ, նշում է, որ 66 հազարանոց հայկական բանակի ներկայությունը Ավարայրում թյուրիմացություն է և հետագա արտագրողների կողմից թույլ տված վրիպակ: Ավարայրում Վարդանանք կարող էին մարտադաշտ դուրս բերել առավելագույնը 16 հազար զինվոր, տե՛ս **Հակոբյան,** 2003, 60- 61, 63:

[6] Տե՛ս **Սարգսյան,** 1969, 188, 189:

[7] Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Վարդան Մամիկոնյանը պարենի սղության պատճառով «ոչ կարէր զմիով տեղեաւ համագունդ զօրսն զարմանել. այս սփռէր տարածանէր ընդ գաւառս գաւառս աշխարհի առ ի հանգիստ ձմերոցին», տե՛ս **Եղիշե,** 1989, 160: Իսկ գարունը բացվելուն պես պարսկական բանակը սկսեց ռազմական գործողությունները՝ շարժվելով Արտազ, և մեծ դժվարություն էր կարճ ժամանակամիջոցում մարտերում փորձված զինվորներին, որոնք ցրված էին Հայաստանի տարբեր մասերում, նորից կենտրոնացնել մի վայրում:

[8] Տե՛ս **Պատմութիւն Սեբէոսի,** 66, 1979: **Մամիկոնյան,** 1989. 84, ծան. 80: **Адонц,** 1971, 286-288:

Սյունու ենթակայության ներքո, Ավարայրում հայկական հեծելազորի թվաքանակը կհասներ առավելագույնը 20 հազարի: Վարդան Մամիկոնյանի հրամանատարության տակ գտնվող 20 հազար հետևակի կեսը նախարարական գնդերն էին, իսկ մյուս կեսը՝ աշխարհազորային գունդը[1], որի հրամանատարին Վարդանը հրամայեց չստիպել նրանց մասնակցելու ճակատմարտին[2], որոնք մի միասին էլ մարտի թեժ պահին լքեցին Ավարայրը՝ ծանրացնելով հայոց բանակի դրությունը:

Մյուս դրվագը վերաբերում է Ավարայրի դաշտում զորագլուխների ընտրությանը: Վարդան Մամիկոնյանը, ճակատամարտից առաջ մարտակարգի բերելով հայկական բանակը, այն, ըստ Եղիշեի, բաժանեց չորս զորագնդի[3], ըստ Ղազար Փարպեցու՝ երեք թևերի և Համազասպ Մամիկոնյանի վերջապահ ուժերի[4]: Նշենք, որ Եղիշեի հիշատակած չորրորդ գունդը համարվել է պահեստային, և Համազասպ Մամիկոնյանն Ավարայրի դաշտում գլխավորել է հայկական պահեստային գնդեր[5]: Սակայն եթե առաջին և երկրորդ գնդերի հրամանատարները՝ Ներշապուհ Արծրունին և Խորեն Խոռխոռունին աչքի ընկնող գործիչներ էին և ունեին ռազմական փորձառություն, ապա ձախ թևը Թաթուլ Վանանդեցուն հանձնելը հապշտապ որոշում էր, քանի որ հենց վերջինիս գլխավորած գնդի գործողությունները հիմք դրեցին հայկական բանակի անհաջողություններին: Հայոց բանակում կային ավելի փորձառու զորահրամանատարներ, մասնավորապես հազարապետ Վահան Ամատունին, որը 440-ական թվականներին վարել էր սպարապետության պաշտոնը[6], և Արշավիր Կամսարականը: Վերջինս Խաղխաղի ճակատամարտում դրսևորել էր բարձր ռազմական հատկանիշներ, ինչպես նաև ինքնուրույն գործելու և առանց գլխավոր հրամանատարի որոշումներ կայացնելու կարողություն[7]:

Ինչպես գիտենք սկզբնաղբյուրներից, ճակատամարտը հիմնականում ընթանում էր հայկական կողմի առավելությամբ մինչև այն պահը, երբ «Պարսից զօրուն, զի զձախակողմն շարժեցին զՀայոց գնդին»[8]: Տեսնելով հայկական բանակի ձախ թևի ընկրկումը՝ Վարդան Մամիկոնյանը պահեստազորի մի մասով շտապեց Թաթուլ Վանանդեցու գնդին օգնության: Թեպետ ձախ թևը հետ էր

---

[1] Ըստ Ս. Սարգսյանի՝ այդ ժամանակվա գնդերը կազմված էին մատյան գնդի օրինակով և առավելագույնը բաղկացած էին 10 հազար զինվորից, տե՛ս **Սարգսյան**. 1969, 188:

[2] Տես՛ **Ղազարայ Փարպեցւոյ,** 1982, 168:

[3] Տե՛ս **Եղիշէ**, 1989, 234:

[4] Տե՛ս **Ղազարայ Փարպեցւոյ**, 1982, 168:

[5] Տե՛ս **Վարդանյան**, 2024, 54-55:

[6] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն,** 1985, 120: Հմմտ. **Վարդանյան,** 2023, 81:

[7] Տե՛ս **Եղիշե,** 1989, 154: **Ղազարայ Փարպեցւոյ**, 1982. 152, 154: Արշավիր Կամսարականի գործունեության մասին տե՛ս **Կոգեան**, 1926, 93-103:

[8] **Եղիշէ,** 1989, 236:

քաշվել, սակայն չկար խուճապահար նահանջ, որպեսզի հարկավոր լիներ, որ գլխավոր հրամանատարն անձնական միջամտությամբ բեկում մտցներ կռվի ընթացքի մեջ[1]: Նա կարող էր ձախ թևին օգնության ուղարկել իր զորապետներից որևէ մեկին, քանի որ հայկական բանակի կենտրոնի և աջ թևի դրությունը գերազանցող էր թշնամու նկատմամբ, և ինքը ղեկավարեր ճակատամարտը, անհաջողության դեպքում՝ պատերազմի հետագա ընթացքը: Վերջիվերջո հայոց զորավարը, հետապնդելով հակառակորդին, կամա թե ակամա կտրվեց կենտրոնական գնդերից, որով հնարավորություն տվեց պարսիկներին, վերադասավորելով ուժերը՝ շրջապատման մեջ վերցնելու նրա գլխավորած զորագունդը[2], որտեղ զոհվեց նաև ինքը՝ Վարդան Մամիկոնյանը:

Մյուս դիտարկումը վերաբերում է Ավարայրի ճակատամարտում երկու բանակների կորուստների թվին: Թե՛ Եղիշեն, թե՛ Ղազար Փարպեցին նշում են, որ հայկական կողմը ճակատամարտում կորցրեց 1036 մարդ, իսկ պարսկականը՝ 3544 մարդ[3]: Նշենք, որ նույնիսկ 40 հազարանոց, այլ ոչ թե 66 հազարանոց հայկական և 80-90 հազարանոց, այլ ոչ թե 120 հազարանոց պարսկական (փղերի մարտական գնդով) բանակների՝ վաղ առավոտից մինչ երեկո բախման հետևանքով, որտեղ օգտագործվում էին զենքի բոլոր տեսակները, վերը նշված փոքր կորուստները բացառվում են: Ճակատամարտերի պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ թվակազմի բանակների բախման հետևանքով նշված քանակի զոհեր երկու կողմերը կկրեին ճակատամարտի միայն առաջին ժամերին, և կորուստները կկազմեին գործող բանակների անձնակազմի մոտավորապես 20-30 տոկոսը: Իսկ ինչ վերաբերում է պատմիչների հաղորդումներին երկու բանակների կորուստների վերաբերյալ, ապա այն չի համապատասխանում իրականությանը: Նրանք այդ թվերը, միտումնավոր կերպով կա՛մ փոքրացրել են, կա՛մ չեն ունեցել ճիշտ տվյալներ[4], հատկապես հայկական բանակինը, քանի որ հարձակումը սկսեց հայկական կողմը՝ անցնելով Տղմուտ գետը, իսկ ինչպես գիտենք բազմաթիվ ճակատամարտերի օրինակից, գրոհող բանակը մարտի սկզբում տալիս է ավելի շատ զոհեր, և Ղազար Փարպեցին, ունենալով Եղիշեի հաղորդումը, նույնությամբ այն արտացոլել է իր աշխատանքում: Գուցե պատմիչների՞ հաղորդումներում ճակատամարտում զոհերի իրական թվերը փոփոխության են ենթարկվել հետագա դարերի դպիրների և արտագրողների կողմից, այսօր միանշանակ չենք կարող պնդել: Սակայն փաստ

---

[1] Տե՛ս **Դավթյան**, 2015, 505:

[2] Տե՛ս **Սարգսյան,** 1969, 198-199:

[3] Տե՛ս **Եղիշէ**, 1989, 242: **Ղազարայ Փարպեցւոյ**, 1982, 170:

[4] Տե՛ս **Սարգսյան,** 1969, 197:

է, որ մեզ հասած թվերը չեն արտացոլում Ավարայրում զոհերի իրական պատկերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով՝ նշենք, որ 450թ. պարսկական տիրապետության դեմ սկսած ազգային ազատագրական պայքարի առաջին փուլն ավարտվեց հայկական կողմի հաղթանակով և տարածաշրջանի մեծ մասում պարսկական տիրապետության տապալմամբ: Սակայն հետագայում հայ նախարարական ուժերը տրոհվեցին երկու հակամարտ խմբավորումների և Հայաստանում սկսվեց քաղաքացիական պատերազմ: 450-451թթ. ձմռանը հայ նախարարական վերնախավը փորձեց վերականգնել թագավորական իշխանությունը՝ նախ փորձելով գահ բարձրացնել Վահան Արծրունուն, ապա՝ Վարդան Մամիկոնյանին: Սակայն մարզպան Վասակ Սյունու ջանքերի պատճառով ապստամբական շարժումը հայտնվեց մեկուսացման մեջ, և 451թ. մայիսի 26-ի Ավարայրի ճակատամարտում հայկական կողմը ստիպված էր ապավինել միայն սեփական ուժերին: Ի վերջո, պարսից արքունիքն էլ հայերի համառ դիմադրության շնորհիվ հարկադրված էր իր զորքերը դուրս բերել մարզպանական Հայաստանից և հրաժարվել իր առջև դրված առավելագույն խնդիրների իրագործումից:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Դավթյան Հ.,** Մամիկոնյաններ. առասպել և իրականություն, Երևան, 2015, «ԴԱԼԼ» հրատ., 794 էջ:
2. **Եղիշէ,** Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմի, թարգմ. և ծանոթ. Ե. Տեր-Մինասյանի, Երևան, ԵՊՀ հրատ.,1989, 448 էջ:
3. **Երեմյան Ս.,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1963, 152 էջ:
4. Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան. ձեռ. № 5980, ա-բ:
5. **Թովմա Արծրունի և Անանուն,** Պատմութիւն տանն Արծրունեաց, բնագիրը հրատարկության պատրաստեց, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Վ. Վարդանյանի, Երևան, 1985, ԵՊՀ հրատ., 500 էջ:
6. **Ժամկոչյան Ա.**, Մարդպետները և մարդպետական տունը V դարում, Ավարայրի խորհուրդը, «Մուղնի» հրատ., Եր., 2003,էջ 24-30:
7. **Իսկանյան Վ.,** Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ., Երևան, «Գիտելիք», 1991, 639 էջ:
8. **Լեո**, Հայոց պատմություն, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, «Հայաստան» հրատ., 1967, 786 էջ:

9. **Կատվալյան Մ.**, Վարդանանց պատերազմը. հաղթանա՞կ, թե՞ պարտություն, Ավարայրի խորհուրդը, «Մուղնի» հրատ., Եր., 2003, էջ 19-23:
10.**Կոգեան Ս.**, Կամսարականները «տեարք Շիրակայ եւ Արշարունեաց» պատմական ուսումնասիրութիւն, Վիեննա, «Մխիթարեան տպարան», 1926, 179 էջ:
11. **Հակոբյան Հ.,** Ավարայրի ճակատամարտը, ՊԲՀ, № 1,Եր., 2003, էջ 41-67:
12.**Հայ ժողովրդի պատմություն,** հ. II, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984, 691 էջ, 6 քարտեզ, 34 թերթ նկ.:
13.**Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի**, Վենետիկ, ի Սուրբ Ղազար, 1862, 164 էջ:
14.**Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի թագավորության հարավ-արևմտյան երկրամասերի վարչա-քաղաքական կացությունը III դարի վերջին և IV դարի սկզբին, «Բանբեր Երևանի համալսարանի», № 2, Եր., 1982, էջ 79-94:
15.**Հարությունյան Բ.**, Սպարապետ Վարդան Մամիկոնյանը՝ Հայոց թագավոր, Ավարայրի խորհուրդը, «Մուղնի» հրատ., Եր., 2003, էջ 31-51:
16.**Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության բանակն ըստ «Զօրանամակի», «Վէմ» (Երևան), № 1, 2012, էջ 23-41:
17.**Հարությունյան Բ.**, Արծրունյաց իշխանական ընտանիքը հայոց պատմության մեջ, Երևան, «Մեկնարկ», 2016, 304 էջ:
18. **Հարությունյան Ս.**, Հայոց պատերազմի 440-450թթ. ռազմաստրատեգիական ընդհանուր ծրագիրը, Ավարայրի խորհուրդը, «Մուղնի», հրատ., 2003, էջ 188-192:
19. **Հովհան Մամիկոնյան,** Տարոնի պատմություն, թարգմ. ներած. և ծանոթ. Վարդան Վարդանյանի, Երևան, «Խորհրդային գրող», 1989,176 էջ:
20. **Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. Ա, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1957, 523 էջ:
21. **Ղազարայ Փարպեցւոյ,** Պատմութիւն Հայոց, Թուղթ առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, Երևան, ԵՊՀ հրատ., 1982, 540 էջ:
22. **Մեսրոպայ Երեցու Վայոցձորեցու,** 2010, Պատմութիւն Սրբոյն Ներսիսի Հայոց Հայրապետի, Մատենագիրք Հայոց, հ. ԺԱ. Ժ. դար, Անթիլիաս-Լիբանան, ԵՊՀ հատ., 2010, էջ 631-743:
23. **Մուրադյան Հ.,** Վարդանանց ապստամության մասին, Երևան, «Հայաստան», 1989, 269 էջ:
24. **Յովհաննու Դրասխանակերտցւոյ կաթողիկոսի,** 1996, Պատմութիւն Հայոց, Երևան, ԵՊՀ հրատ., 1996, 397 էջ:

25. **Նալբանդյան Վ.**, 451թ. ազատագրական շարժման հետ կապված մի հարցի շուրջ, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր հասարարական գիտությունների», թիվ 12,1953, էջ 69-73:
26. **Պատմութիւն Սեբէոսի**, աշխատասիրությամբ Գ.Վ. Սարգսյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, 446 էջ:
27. **Սարգսյան Ս.** Հայ ռազմական արվեստի պատմությունից, Երևան, «Հայաստան», հրատ., 1969, 218 էջ:
28. **Վարդանյան Ա.**, Հայ-աղվանական զինակցությունը պարսկական տիրապետության դեմ (V դարի կեսին), ՊԲՀ, N 2, 2023, 35-52:
29. **Վարդանյան Ա.**, Վարդան Մամիկոնյանի գործունեությունը 415-442թթ., ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 3, 2023, էջ 75-85:
30. **Վարդանյան Ա.,** Մամիկոնյանների գործունեությունը V դարի առաջին կեսին, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 2, 2024, 44-62:
31. **Վարդանյան Վ.**, Արծրունիները հայոց պատմության մեջ, Երևան, «Գիտություն», 2002, 224 էջ:
32. **Փաւստոսի Բիւզանդացւոյ,** Պատմութիւն Հայոց. բնագիրը Ք. Պատկանյանի, թարգմ. և ծանոթ. Ստ. Մալխասյանցի, Երևան, ԵՊՀ հրատ., 1987, 456 էջ:
33. **Օրմանեան Մ.**, Ազգապատում, Էջմիածին, 2001, տպ. Ս. Էջմիածնի, 1780 սյուն:
34. **Адонц Н.,** Армения в эпоху Юстинияна, Ереван, Изд. Ереванского университета, 1971, 526 с.
35. **Айвазян А.,** Армяно- персидская война 449- 451 гг., компании и сражения, Ереван, «Воскан Ереванци», 2016, 516с.
36. **Кудрявцев А., Кудрявцев Е.,** Феодальный город Северного Кавказа (средневековый Дербент в VI-XII вв.), Ставрополь, Изд. «Северо- Кавказский федеральный университет», 2015, 307с.
37. **Манасерян Р.**, Европейские гунны и Ближний Восток, Ереван, “Лусакн”, 2011, 80 с.
38. **Налбандян В.,** Егишэ, Ереван, Изд. Ереванского госуниверситета, 1972, 245с.
39. Хачатрян В., Вопросы военного искусства в книге Егише «О Вардане и войне армянской», «Вестник обшественных наук» НАН РА, N 1, 1992, с. 126-139.

THE SITUATION AROUND MARZPANATE OF ARMENIA IN THE PRE – AVARAYR PERIOD

VARDANYAN ARGISHTI
PhD in Historical Sciences,
Senior Researcher at the Department of Medieval History, Institute of History,
National Academy of Sciences of the Republic of Armenia
e-mail: argishtivardanyan3@gmail.com

In the second half of the V century, Sassanid Persia took steps to eradicate Christianity and establish Zoroastrianism, which caused resistance from the Transcaucasian peoples, in particular, the Armenians. The Armenian army, led by Sparapet (supreme military commander) Vardan Mamikonyan, inflicted a crushing defeat on the Persian army in Khaghkhagh in October 450 and liberated Aluank. In the winter of 450-451, the nakharars attempted to restore the Armenian kingdom, overthrown in the not so distant past, by elevating Vahan Artsruni to the throne. But soon, having rejected his candidacy, the nakharars transferred royal powers to Vardan Mamikonyan, handing over to him the royal residence of the Arshakids. Later, thanks to the efforts of the marzpans, who contributed to the victory of the Persians, the rebel movement was suppressed. On May 26, 451, in Avarayr, the Armenian army fought with the Persian army, which was twice as large. Vardan Mamikonyan fell on the battlefield, and the Armenian army, having retreated to hard-to-reach areas of the country, continued to fight until the end of 451. Faced with fierce resistance from the Armenians, the Persians refused to implement the tasks set before them.

Keywords: *Vardan Mamikonyan, Vasak Syuni, Yeghishe, Ghazar Parpetsi, Vahan Artsruni, the Battle of Avarayr.*

ПОЛОЖЕНИЕ МАРЗПАНСКОЙ АРМЕНИИ ДОАВАРАЙРСКИЙ ПЕРИОД

ВАРДАНЯН АРГИШТИ
Кандидат исторических наук
Старший научный сотрудник отдела истории средних веков
Института истории НАН РА
электронная почта: argishtivardanyan3@gmail.com

Сасанидская Персия во второй половине V в. предприняла шаги по искоренению христианства и утверждению зороастризма, что вызвало сопротивление закавказских народов, в частности, армянского. Армянское войско, во главе со спарапетом Варданом Мамиконяном, в октябре 450г. нанесло сокрушительное поражение персидской армии в Хагхахе и освободило Алуанк. Зимой 450-451гг. нахарары предприняли попытку восстановления армянского царства, низвергнутого не в столь далёком прошлом, возведя на престол Вагана Арцруни. Но, вскоре, отказавшись от его кандидатуры, нахарары передали царские полномочия Вардану Мамиконяну, передав ему царскую резиденцию Аршакидов. Но впоследствии, благодаря усилиям марзпанов, способствовавших победе персов, повстанческое движение было пресечено. 26-го мая 451г. в Аварайре армянское войско сразилось с персидским войском, которое вдвое превосходило его. Вардан Мамиконян пал на поле брани, а армянское войско, отступив в труднодоступные районы страны, продолжало бороться до конца 451г. Столкнувшись с ожесточенным сопротивлением армян, персы отказались от реализации поставленных перед ними задач.

Ключевые слова: *Вардан Мамиконян, Васак Сюни, Егише, Лазарь Парпеци, Ваган Арцруни, Аварайрская битва.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 08.01.2025թ.:
Հոդվածը գրախոսվել է 18.01.2025թ.:
Ընդունվել է տպագրության 25.04.2025թ.: